պիտանիք արարեալ մեծ վարժապետին Գրիգորի հռետորի»։ Չեմ կարող ասել, թէ Մխիթարի ուսուցիչ Գրիգորիսն է այս հեղինակը, թէ Կիրակոս և Յովհաննէս Երզնկացիների նոյնանուն աշակերտը ՊԴ (= 1355) թուին յիշատակուած, որ կը տեսնենք քիչ յետոյ։

Նոյն 1314 թուականին վերև յիշուած Պօղոս վարդապետը, որ Ակներից Գլաձոր էր եկել «յաղագս փափագման խմաստասիրական արհեստից» «առ ոտս երիցս երանեալ բաբունապետին Եսայեայ, որ իբրեւ զարեգակն լուսաւորեալ պայծառացուցանէ զբոլոր ազգս եւ զեկեղեցիս Հայաստան աշխարհիս», գրում է մի նկարազարդ աւետարան «հրամանաւ եւ ծա-



Պատկեր 207.

խիւք մեծազարմ, իշխանաշուք լուսաբողբոջ մանգանն Տարսայիճ կոչեցեալ, իսկ ի շնորհս հոգւոյն սրբոյ Ստեփանոս»։ Սա Յոհան Աւրպելու յաջորդն էր, Զալալ իշխանի որդին, Տարսայիճ Օրբէլեանի և Մինախաթունի թոռը։ Այս ձեռագիրը երբեմն պատկանում էր Գանձասարի վանքին, որի յիշատակարանն ու նկարազարդ ընծայականը միայն գտնւում է Խաչիկ վարդապետի մօտ, այժմ Էջմիածնի պետական ձեռագրատանը (պատկ. 208)(*)։ Յիշատակարանից տեղեկանում ենք նաև, որ այս իշխանազուն եկեղեցականը պատրաստւում էր վարդապետական և եպիսկոպոսական աստիճան ստանալու, երկար ժամանակ նուիրուելով «ի կրթութիւն. գրոց ... նաև յիմաստասիրական արհեստն յոլով ժամանակս դեգերեալ ընդ թեւաւք խնամոց սր. եւ երանաշնորհ բաբունապետին եւ տիեզերալոյս վղին. Եսայեայ»։ Ստեփանոս Տարսայիճի աշակերտութիւնը Նչեցու մօտ՝ կը տեսնենք քիչ յետոյ հէնց Նչեցու խօսքերով։

Սարգիս աբեղայ «սպասաւոր բանի» 1317 թուին գրել է Նիւսացու գործերի հետ նաև Ներսէս Շնորհալու թղթերը եայլն «Ամիր–Հասանայ, որդւոյ Իաչէ, որդոյ Ամիր–Հասանայ, որդւոյ Պռաչայ», իշխանութեան ժամանակ, նկարազարդուած Գրիգորէս և Մամախաթուն ամուսինների պատկերներով, որոնք ծունկ են չոքել աթոռի վերայ նստած, Յիսուս մանուկը գրկին՝ Մարիամի առաջ (Ալիշ. Սիսակ. 133. գունազարդ). ձեռագրի ընդհանուր ծաղկողն է Թորոս Տարօնեցին, Գլաձորի մեծ մանրանկարիչը, իսկ վերոյիշեալ ամուսինների նկարիչ, Ալիշանը կարծում է, թէ պատկերի տակ մակագրող Յովհաննէսը լինի. «զանպիտան Յոհանէս յիշել աղաչեմ»։ Ո՞վ է այս Յոհաննէսը, տարաբաղդաբար ճիշդ որոշել չենք կարող, բայց նա չէ ոչ Յովհաննէս մատենագիր Երզնկացին և ոչ նոյն անուն և նոյն տեղացի առաջնակարգ գրիչը, Կիրակոսի եղբօր որդին, որոնց գրչութիւնը մեզ լաւ ծանօթ է և միանգամայն տարբեր մակագրութեան գրից։ Նա չէ և Յովհաննէս Արճիշեցին կամ Ոսպնակերը, որի գործունէութեան շրջանը Արճէշն էր, և հաւանօրէն, իւր ընկերներ Մխիթար Սասնեցու և Ստեփանոսի հետ հայրենիք վերադարձած։ Բայց կար Յովհաննէս անունով մի ուրիշ քահանայ, որ Եփրեմ գրչի քեռին է և Յովհաննէս գրչի ընկերը, «ծաղկեալ հոգւով և հերով». սա է տուել Կարապետ Տոսպեցու համար գրուած կէս Աստուածաշնչի օրինակը, 1318 թ. քիչ յետոյ Երուսաղէմ գնացել, որին անձկանօք սպասում էր Յովհաննէս գրիչը։ Հաւանօրէն այս Յովհաննէսն է, որ Ներսէս վարժապետ Մշեցու յիշատակարանի տակ, լուսանցքում աւելացրել է «նա եւս զՅովհաննէս յիշել աղաչեմ» (պատկ. 197)։ Պատկերների վերայ եղած մակագրութիւնները, ինչպէս և Աստուածածնի պատկերի տակ Յովհաննէսի յիշատակութիւնը միևնոյն գրով է եւ շատ նման Թորոս Տարօնեցու գրին (պատկ. 224), ուզում ենք ասել, թէ նկարիչը հէնց ամբողջ գիրքը ծաղկող Տարօնեցին է և ոչ Յովհաննէս, որի անունն այստեղ գրուած է սիրալիրութեամբ իբրև աղաչաւորի։ Պատկերը արժէքաւոր է գեղարուեստական և ազգագրական տեսակէտներով։

Գրչութեան արուեստի հոյակապ արտադրութիւններն այս դպրոցի պատրաստուած են 1317 և 1318 թուականներին, երկուսն էլ Աստուածաշունչ. առաջինը ստացել է Կիրակոս Երզնկացին. Ծննդոց գրքի վերջում եղած յիշատակարանի համեմատ 34բ. «Գրեցաւ Ծննդոց գիրքս ի թվ. ՉԿԶ»։ Ձեռագրիս մէջ իրենց

(*) Տես Christ. Vostok, T. II. vib. II. 1913, մեր յօդուածը Potomstvo Tarsaitcha Orbelian էն. 233-235, նաև առանձին արտատպութեամբ։ Ցուցակ Խաչիկ վարդապետի, բ. 29/30։